ՀՈԲԵԼՅԱՆ ԼՎՈՎՈՒՄ

Սույն թվականի մայիսի 16—20-ը, Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Պիմենի հրավերով և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ի կարգադրությամբ, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և Ս. Էջմիածնի միաբան Տ. Ղըսակ աբեղա Կարապետյանը մեկնեցին Ուկրաինայի Լվով քաղաք՝ մասնակցելու Ուկրաինայի հունա-կաթոլիկ Եկեղեցիների՝ Ռուս Ուղղափառ Մայր Եկեղեցուն միանալու քառասունամյակի հանդիսություններին:

40 տարի առաջ, 1946 թ. մայիսի 7-ին, Լվովի Ս. Յուրա Եկեղեցում տեղի է ունեցել ազգային-եկեղեցական ժողով, ուր ժողովի որոշմամբ Ուկրաինայի բոլոր հունա-կաթոլիկ Եկեղեցիները իրենց հոժար կամքով միացան Ռուս Ուղղափառ Մայր Եկեղեցուն: Այս շարժման ղեկավարներն էին՝ Ս. Այլակերպման եկեղեցու վանահայր Գավրիլ ավագ քհն. Կոստելնիկը, Նիժանկով եկեղեցու վանահայր Միխայիլ քհն. Մելնիկը, Կոպիչինցյախ եկեղեցու վանահայր Անտոնի քհն. Պելվեցկին: Այս մեծ գործի հաջողության համար Գավրիլ ավագ քհն. Կոստելնիկը իր կյանքը զոհաբերեց:

Իսկ ինչո՞ւ հատկապես Ս. Յուրա եկեղեցում տեղի ունեցավ այդ պատմական ժողովը: Որովհետև 1806 թ. ի վեր Ս. Յուրա կաթոլիկ եկեղեցին հանդիսանում էր Գալիցիայի կաթոլիկ միտրոպոլիտի աթոռատեղին: Այժմ նույն Եկեղեցին Լվովի և Տերնոպոլի միտրոպոլիտության նստավայրն է:

1986 թ. մայիսի 17-ին, ժամը 10-ին, Ս. Յուրա եկեղեցում տեղի ունեցավ հոբելյանի բացման հանդիսավոր արարողությունը: Բոլոր հյուրերին և ներկաներին ողջույնի խոսքով դիմեց Ուկրաինայի էկզարխ, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը: Ապա ցեկուցումներով հանդես եկան Լվովի և Տերնոպոլի միտրոպոլիտ Նիկոդիմը, Իվանո-Ֆրանկովսկի և Կոլոմենսկի արքեպիսկոպոս Մակարին, Պոչաև մենաստանի վանահոր փոխանորդ Մարկ վարդապետը, չեխ, լեհ, բուլղար, հույն, վրաց, հունգար, Անտիոքի քուր Եկեղեցիների ներկայացուցիչները և այլ հյուրեր:

Հայ Եկեղեցու անունից խոսք առավ գերշ. Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, որը հաղորդեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ողջույնն ու եղբայրական ջերմ բարեմաղթությունները ներկա ժողովականներին: Կարդացվեցին շնորհավորական հեռագրեր: Վերջում ուղարկվեցին երեք հաղորդագրություններ Համայն Ռուսիո և Մոսկվայի Պատրիարք Պիմենին, մասնակից քուր Եկեղեցիներին և ՍՍՀՄ և ՈՒՍՍՀ Մինիստրների խորհուրդներին կից կրոնական գործերի խորհուրդներին:

Մայիսի 18-ին, կիրակի օրը, ս. պատարագ մատուցվեց Ս. Յուրա եկեղեցում: Պատարագից հետո բոլոր ժողովականները մեկնեցին «Փառքի բլուր» և ծաղկեպսակներ զետեղեցին Հայրենական մեծ պատերազմի հերոսների գերեզմանին: Ապա մեկնեցին Լիչագովի հայտնի գերեզմանատուն, ուր Գավրիլ ավագ քհն. Կոստելնիկի գերեզմանին կատարվեց հոգեհանգստյան պաշտոն: Երեկոյան ժողովականները այցելեցին Լվովի եկեղեցիները՝ Ուսպենսկի, Ս. Նիկոլայի, Պյատնիցկի, Պրեոբրաժենսկի: Հյուրանոց

վերադարձի ճանապարհին Տ. Անանիա եպս. Արաբաջյանը և Պսակ աբեղա Կարապետյանը մեկնեցին տեղի հայոց եկեղեցի*:

Մայիսի 19-ին հոբելյանի մասնակիցները ավտոբուսներով մեկնեցին Պոչևակու մենաստան: Ժամը 10.30-ին մենաստանի Ուսպենսկու տաճարում սկսվեց ս. պատարագը, որին իրենց մասնակցությունը բերեցին էկզարխ ֆիլարետը, միտրոպոլիտ Նիկոդիմը, մի շարք եպիսկոպոսներ և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ: Հավարտ ս. պատարագի տրվեց հրաժեշտի ճաշկերույթ: Ճաշկերույթին շնորհակալական խոսքով հանդես եկան քույր Եկեղեցիների ներկայացուցիչները: Տ. Անանիա եպս. Արաբաջյանը Հայ Եկեղեցու և Վեհափառ Հայրապետի անունից կրկին անգամ շնորհավորեց հոբելյանի առթիվ և շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՊՍԱԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

* Հայերը Լվովի հնագույն բնակիչներից են: Լվով քաղաքը հիմնադրել է Գալիցիա-Վոլիմյան իշխան Դանիել Ռոմանովիչ Գալիցկին ԺԳ դ. 60-ական թթ. և կոչել իր Լև որդու անունով: Լվով քաղաքը եղել է Լեհաստանի և Արևելյան Եվրոպայի հայության հոգևոր կենտրոնը 1367 թ.-ից մինչև 1772 թ.: Հայերը Լվովում ունեին երեք եկեղեցիներ՝ Ս. Հակոբ, Ս. Խաչ, Մայր եկեղեցին և մեկ մենաստան: Այժմ կանգուն է միայն Մայր եկեղեցին, որը կառուցվել է 1363—1370 թթ. (1083 թ. վայոյա եկեղեցու տեղում):